ԶՎԱՐԹՆՈՑԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ

Երբ մեր դարասկզբին վարդապետ Խաչիկ Դադյանը պեղում էր Զվարթնոցի ավերակը, երբ ճարտարապետ-գիտնական Թորոս Թորամանյանը այս ու այն կողմ ընկած զանգվածներն ու քարաբեկորներն ուսումնասիրելով վերականգնում-վերստեղծում էր երբեմնի կանգուն շինության հոյակապ պատկերը, հուշարձանի նկատմամբ առաջացած հետաքրքրությունը գնալով վերաճում էր մի գայթակղիչ գաղափարի՝ վերականգնել տաճարն այն ծավալով ու տեսքով, ինչպիսին եղել է մոտ 1350 տարի առաջ: Ժամանակ առ ժամանակ փորձեր արվել են հանրության ցանկությունն իրականություն դարձնելու ուղղությամբ, բայց ամեն անգամ գործը ձգձգվել, ապա խանգարվել է, փոխվել են ժամանակներն ու հանգամանքները, ստեղծվել են դրա համար անբարենպաստ պայմաններ:

Այժմ Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման և օգտագործման գլխավոր վարչությունը ձեռնարկել է հուշարձանի ստորին մասերի մասնակի վերականգնումը: Այդքանը շատ քիչ է, սակայն ավելին անել հին հիմքերի վրա հնարավոր չէ:

Տասներորդ դարի վերջերում Զվարթնոցը կործանված էր: Հայոց նորընծա թագավոր Շահնշահ Հայոց ու Վրաց Գագիկ Առաջինը բարի միտք հղացավ՝ վերականգնել այդ հրաշակերտ կոթողն իր տերության մայրաքաղաք Անիում: Նա այդ տաճարը նվիրեց Գրիգոր Լուսավորչին, նույնն է թե քրիստոնեության պետականորեն ընդունման 700-ամյակին, որ լրանում էր 1001 թվականին: Եվ այդ տաճարը հետնորդները կոչեցին կառուցողի անունով՝ Գագկաշեն:

Եվ ահա 2001 թվականին լրանում է հայոց կողմից քրիստոնեությունը ընդունելու 1700 տարին: Այդ կապակցությամբ այլ միջոցառումների թվում Էջմիածնի Մայր աթոռը որոշել էր կրկնել Զվարթնոցը՝ կառուցելով Երևանում, որպես Արարատյան թեմի գլխավոր եկեղեցի:

Թվում էր, ի վերջո, բոլոր պայմանները ստեղծվեցին Զվարթնոցը կանգուն տեսնելու երազանքի իրականացման համար, թվում էր այլևս խանգարիչ ոչ մի հանգամանք չկա, բայց իրավիճակը կտրուկ փոխվեց, և հարցի լուծումը սպառնում է ձգձգվել անորոշ ժամանակով: Հիմնական նախագիծը, որ իրականացված է Թ. Թորամանյանի ստեղծած վերակազմության հիման վրա, հավանության էր արժանացել նախ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի, ինչպես նաև Մայր աթոռի ճարտա-րապետական-շինարարական հանձնախմբի կողմից: Առաջարկվել էր տաճարը տեղադրել Երևանի կենտրոնում՝ Օղակաձև զբոսայգու հարավային վերջավորության հարևանությամբ, դեռևս չկառուցապատված, ազատ տեղանքում: Նույնիսկ կար այդ տեղանքը որպես շինհրապարակ Զվարթնոցի կառուցմանը հատկացնելու համաձայնությունը:

Չգիտես ինչ հաշիվներից ելնելով, ապագա կառույցը համարվեց փոքր, իբր այն չի կարող բավարարել հավատացյալների պահանջները, մանավանդ հոգևոր տոների օրերին, երբ հավաքվում են մեծ թվով մարդիկ: Պատճառաբանվա՞ծ է առարկությունը, հիմնավո՞ր է այն աստիճան, որ ձեռնարկված գործը չեղյալ համարվի և ամեն ինչ սկսվի նորից…

Համահայկական հոգևոր կենտրոնի՝ Էջմիածնի Մայր տաճարի աղոթասրահի համեմատությամբ Զվարթնոցի ներքին տարածությունը չորս անգամ մեծ է (Զվարթնոցն իր տարողությամբ եղել է Պատմական Հայաստանի ամենամեծ եկեղեցին): Եթե ժամասածությունը Զվարթնոցում այնպես կատարվի, ինչպես այժմ կատարվում է Էջմիածնում՝ հոտնկայս, ապա աղոթասրահում և շրջանց սրահներում կտեղավորվեն 3500-4700 մարդ՝ Էջմիածնի 800-900 մարդու դիմաց:

Եվ ահա հակառակ մեր առաքելական եկեղեցու 1700-ամյա ավանդույթին, ըստ որի ժամերգության, պատարագի ու երգեցողության ունկնդրումը տեղի էր ունենում կանգնած, արդ գտնում են, որ պետք է լինեն նստարաններ… Այդ դեպքում էլ Զվարթնոցը կտեղավորի 1800 նստատեղ: Մեր կարծիքով, մեկ թեմի եկեղեցու համար սա փոքր թիվ չէ: Սակայն առաջարկվում է կառուցել եկեղեցական այնպիսի

շինություն, որը տեղավորի առնվազն 2500 նստատեղ: Շատ չէ՞: Այս թիվը երկու անգամ գերազանցում է Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի նստատեղերի թիվը, որ 1260 է:

Աշխարհում ընդամենը մի քանի համերգասրահներ կան, որոնց նստատեղերը 2000-ից ավել են: Լոնդոնի թատրոնի դահլիճն ունի 2150 տեղ, նույնքան է նաև Փարիզի օպերայի Մեծ թատրոնի տարողությունը: Վագների հայտնի թատրոնն ունի 1650 տեղ, Մինսկի օպերայի դրամատիկական թատրոնի նստատեղերի թիվը 1510 է, Մոսկվայի Կարմիր բանակի կենտրոնական թատրոնինը՝ 1900:

Իզուր չէ, որ նման դահլիճների տիպային նախագծերի առաջադրանքներում նստատեղերի թիվը ընդունում են 700-1200 (տես հայտնի ճարտարապետներ Մորդինովի և Վլասովի մշակումները): Սա բացատրվում է այն հանգամանքով, որ բարձրակարգ համերգասրահներում վերջին շարքերի հեռավորությունը թեմապատից սահմանափակ է՝ 25-30 մետր: 2500 տեղանոց սրահի լայնությունը 25-30 մ ընդունելու դեպքում դրա երկարությունը հասնում է 55-65 մետրի, որ գործող նորմատիվներով թույլատրելի չէ:

Նկատված է, որ նույնատիպ եկեղեցիներում նստարաններով կահավորվում է ոչ ամբողջ տարածությունը, այլ մասամբ միայն՝ մի քանի հարյուր հոգու համար, բազիլիկ եկեղեցիներում՝ միջին նավի խորանին մոտ մասը, գմբեթավոր եկեղեցիներում՝ գմբեթատակ տարածությունը:

Ահա այսպիսին է իրավիճակը, մինչդեռ պատրաստվում են շինարարության սկիզբը հետաձգել, մինչև որ հայտարարվելիք մրցույթով ստեղծվի նոր նախագիծ: Սա նշանակում է եկեղեցու կառուցման գործը հարցականի տակ դնել. նախագծի պատրաստման համար կպահանջվի երկու տարի, իսկ թե երկու տարի հետո որքանով բարենպաստ կլինեն ժամանակները, այսօր ոչ ոք չի կարող երաշխավորել:

Նոր նախագծի մրցույթի կողմնակիցները ակնկալում են արտակարգ արդյունք: Դրա նախադրյալները չկան. հայ տաղանդավոր ճարտարապետները վերջին

տասնամյակներում ըստ ամենայնի բացահայտեցին իրենց կարողությունները, արեցին այն, ինչի ընդունակ էին. նրանց նախագծելիք նոր եկեղեցին Զվարթնոց չի լինի:

Զվարթնոցը եզակի գլուխգործոց է, մեր ճարտարապետության, մեր արվեստի, մեր հոգևոր մշակույթի դեմքը, այնպես, ինչպես Իտալիայի համար Կոլիզեյը, ս. Պետրոսի տաճարը, Հունաստանի համար՝ Պարթենոնը, երբեմնի Բյուզանդիոնի համար՝ ս. Սոֆիայի տաճարը: Եվ եթե այս վերջիններս կանգուն են կամ մասնակիորեն վնասված, ապա Զվարթնոցը գրեթե ամբողջությամբ ավերված է, չկա: Որպեսզի հնարավոր լինի այն դնել իր մեծ նախորդների կողքին, անհրաժեշտ է բարձրացնել կառույցի կրկնօրինակը:

Զվարթնոցը ժամանակին նշանավորեց հայ ճարտարապետության նոր վերածնունդը, նրա ազդեցությունն ակներև է Հայաստանում և Հայաստանի սահմաններից դուրս: Այժմ, երբ անհրաժեշտություն է դարձել մեր ճարտարապետության մեջ ազգային ավանդույթների օգտագործումը, անգնահատելի է Զվարթնոցի նոր օրինակի դերը որպես նոր առաջընթացի երաշխիք: Զվարթնոցի լուսավորչավանդ ձևը դեռ այն հեռավոր ժամանակներում սրբագործվել է, կառույցն այն նույն պատկերն ունի, ինչը որպես «տեսիլք» հայտնվել է սուրբ Սահակին:

Զվարթնոցը համազգային հետաքրքրություն շարժող երևույթ է, նրա վերականգմանը կարձագանքեն ոչ միայն հանրապետության, այլև Սփյուռքի բոլոր համայնքներն ու անհատները՝ բերելով իրենց անշահախնդիր ներդրումը:

Եվ, վերջապես, մեկ այլ նկատառում: Զվարթնոցը կանգուն տեսնելու ձգտումը հնարավոր է դարձրել կառույցի ներքին մասերի աննկատ վերադասավորումով ավելացնել նստատեղերի քանակը: Այժմ առկա են նախագծի երեք տարբերակներ, որոնցից առաջինն ընդգրկում է 1800, երկրորդը 2400, երրորդը 2700 նստատեղ: Մեզանում և արտասահմանում շինությունների այս կարգի արդիականացման շատ օրինակներ կան: Հայտնի է, օրինակ, որ Գագիկ արքան և ճարտարապետ Տրդատը Զվարթնոցը Անիիում կրկնելիս, ի թիվս մի շարք թեթևակի ձևափոխությունների,

ընդարձակել են տաճարի ներքին տարածությունը՝ ավելի շատ հավատացյալներ տեղավորելու նպատակով:

Ահա այս վերջին ձեռնարկումով կարծես բավարարվում են նստատեղերի քանակի վերաբերյալ պատվիրատուի պահանջները: Թվում էր, թե այլևս խանգարող ոչինչ չի մնում Զվարթնոցի ճանապարհին: Բայց ահա նոր արգելափակոց: ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհուրդը և Արարատյան թեմը գտնում են, որ իրենք որտեղ էլ որ եկեղեցի կառուցելու լինեն, պիտի իրականացնեն բոլորովին նոր նախագծով, իսկ Զվարթնոցը… Զվարթնոցը հուշարձան է, նրանով թող զբաղվի Հուշարձանների պահպանման և օգտագործման գլխավոր վարչությունը:

Այս անսպասելի իրողությունը որքան ափսոսանքի, նույնքան էլ զարմանքի տեղիք է տալիս: Զվարթնոցը կրկնելուց խուսափելու այն պատճառաբանությունը, թե նրա նախագիծը կամ վերականգնելու տեղի խնդիրը վեճեր է հարուցում, ընդունելի չէ: Միանգամայն բնական է, որ լինեն տարբեր կարծիքներ, դրանք կարելի է ընդհանուր հայտարարի բերել լայն քննարկումների ընթացքում: Կարևորն այն է, որ գիտակցվի սկզբունքի կարևորությունը: Կրկնելով Զվարթնոցը, մենք միանգամից երկու բան ենք շահում. նախ որպես 7-րդ դարում ծնված, բայց հետագայում կործանված հուշարձան վերադարձվում է այն ստեղծող ժողովրդին: Եվ, ապա, վերականգնելով հուշարձանը, լիարժեք ձևով կօգտագործենք նրա ուտիլիտար հնարավորությունները՝ որպես մայրաքաղաքում կառուցված մեկ թեմի եպիսկոպոսանիստ եկեղեցի: Նկատենք նաև, որ Հուշարձանների պահպանման և օգտագործման գլխավոր վարչությունը աշխատում է մեծ ծանրաբեռնվածությամբ, առանց այդ էլ շատ են ավերակված կոթողները, որոնց անմիջական ու հրատապ օգնությունը նրա պարտականությունն է:

Նոր եկեղեցու նախագիծ կազմելը հանցանք չէ, խրախուսելի է, դա պետք է անել, ասենք, նոր Սպիտակի համար և ոչ Զվարթնոցի «հաշվին»: Պետք է վերադառնալ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի նախորդ որոշմանը՝ Զվարթնոցը կրկնել

Երևանում, որպես Արարատյան թեմի գլխավոր եկեղեցի: Այդ պատմական իրադարձությունը պետք է տեղի ունենա:

ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

«Գրական թերթ», 6 հոկտեմբերի 1989 թ., թիվ 41 (2361):